

1

1

ԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԽԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9(47.925)/15
Ա - 79

Ս. ԵՐԵՄՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ
ԶԱՔԱՐԻՄ
ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ

A 6823



ՀԱՍՈՒ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԻ ՀՐԱՏԱՐԱՎՅՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1944

ՀԱՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պատ. խմբագիր՝ Մ. ԿԵՐՍԻՍՅԱՆ
Ծափկը Գլխիչ՝ Մ. Ն. ՄՈՆԻ

Академия Наук Армянской ССР
Институт Истории

Боевые подвиги сынов Армении

С. ЕРЕМЯН

Амирспасалар
Захария Долгоруки

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР. Ереван, 1944.

ՎՃ 01429 Պատվեր 308. Հրատ. 220. Տիրած 1000.

2 տպ. մամուլ, մամուլում 29730 տպ. Նիշ:

Ստորագրված է տպագրության 10/VIII 1944 թ.

ՀԱՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԻ 1-ին տպարան

Տասնմեկերորդ դարի կեսերին մեծ ողբերգություն էր ապրում հայ ժողովուրդը: Բյուզանդիայի քաղաքականության հետեանքով Հայաստանում ոչնչացվեց հայկական թագավորությունների ինքնուրույնությունը: Հայ պատմագիր Արիստակես Լաստիվերտցուն տխուր բախտ էր վիճակվել ականատես լինելու Անիի թագավորության ողբերգական վախճանին և վերջին թագավեր, երիտասարդ Գագիկ II-ի արտաքսմանը իր հայրենի երկրից:

Հաստիվերտցին այսպես է նկարագրում այն ծանր օրերը, երբ թուրք-սելջուկյան արշավանքների հետեանքով իսպառ վերացավ հայկական թագավորությունը:

«Այժմ, թագավորը պատվից ընկած, իբրև կալանավոր գերի է հեռու երկրում: Այսպես էլ հայրապետական աթոռը զրկված աթոռակալից, այրի մնացած նորահարս կնոջ նման տխուր դեմքով է երևում: Հեծելազորն

անտեք, որը Պարսկաստան, որը Հունաստան
 և որը Վրաստան է շրջում: Աղաւթների սե-
 ունէ գունգը հայրենիքից ելած, փառքից
 զրկւած, մոնչում է ինչպես կորյուններն
 իրենց բներում: Արքունական ապարանքը
 ավերակ է և անմարգարեակ: Մարդաբնակ
 աշխարհը դատարկվել է բնակչությունից:
 Ուրախութեան ձայն չի լսվում այգեկութիւն
 և ոչ հնձանը կոխողների գովեստը: Ոչ մա-
 նուկներն են խաղում ծնողների առաջ և ոչ
 ձերերն են նստում հրապարակում աթոռով:
 Ոչ հարսանիքի ձայն է լսվում և ոչ հարսների
 առադատներն են զարդարվում: Այս բոլո-
 րը պակասեց, կորավ և այլևս չի կենդանո-
 ւա...»:

Տասնմեկերորդ դարի կեսերին թուրք-սել-
 ջուկյան հորդանների գործած բազմաթիւ ար-
 շավանքները լիովին քայքայեցին ու ամա-
 յաղրին Հայաստանը: Հայկական ծաղկուն
 թագավորությունները ոչնչացան, իր քա-
 ջութեամբ ու հերոսութեամբ հռչակված հայ-
 կական այբուձին (հեծեւագործ), իր գորա-

վարները՝ հայ նախարարների մնացորդների
վերաավորությամբ, ցրվեց դեպի հարեան եր-
կրները: Նրանք ապաստան գտան Փոքր Ա-
սիայում, Վրաստանում և հատկապես Կիլի-
կիայում:

Այդ նույն ժամանակ, երկրի մեծ մասում
հաստատվեցին սելջուկյան մեծ ու փոքր
ամիրաները, որոնք, իրենց տերիտորիան
ընդարձակելու համար, շարունակ թշնամա-
կան դիրք էին բռնել մեկմեկու հանդեպ և
պատերազմում էին իրար դեմ: Սրանցից
առանձնապես աչքի էր ընկնում Շահ-Արմեն-
ների պետութունը, որի աթոռանիստն էր
Խլաթ քաղաքը (Վանա լճի ափին): Շահ-Ար-
մեններին վասալ ամիրաները նստում էին
Կարսում, Դվինում, Սուրմալում և հայ-
կական մյուս քաղաքներում: Բաղրատունյաց
Հայաստանի ծաղկուն և հրաշալի մայ-
րաքաղաք Անին դարձել էր Շահադյան
քուրդ ամիրաների կենտրոնը: Կարնո-քա-
ղաքի (այժմյան Էրզրումի) և Երզնկայի
(այժմյան Էրզինջանի) ամիրաները XIII

դարի սկզբից ենթարկվում էին Ռուսի
(փոքրասիական) սելջուկներին:

Սյունիքի և Արցախի անանցանելի ձո-
րերում—հյուսիս-արևելքում, և Հայկական
Տափրոսի լեռներում—հարավում, շարունա-
կում էին իրենց անկախությունը պաշտ-
պանել հին նախարարական տների խղճուկ
բեկորները: Սյունիքում Բաղաց-Կապանի
թագավորությունը, որ վերջինն էր Հայաս-
տանի տերիտորիայի վրա, ոչնչացվեց 1170
թվականին, Իրանի աթաբեկ Նուսուրի
(1136—1174 թ.թ.) կողմից: Մյուսը՝ Լոռու—
Ջորապետի թագավորությունը Չախչախվեց
XI դարի վերջին և այնտեղ թագավորող
Կյուրիկյան տան մնացորդները դեռևս XIII
դարի սկզբներին ապաստանում էին Մած-
նաբերդ և Նորաբերդ ամրոցներում:

Երբեմնի ծաղկուն Ամբերդ, Բջնի և այլ
բերդերը դարձան թուրք-սելջուկյան հրո-
սակախմբերի որջեր: Ավագակային խմբերի
պարագլուխները թաքնվելով այդ անառիկ
ամրոցներում, ահաբեկում էին Արարատյան

հարթավայրի ու Շիրակի դաշտի հայ բը-
նակչությանը:

Սակայն այս դժնդակ պայմաններում հայ
ժողովուրդը չկորցրեց իր մարտական ոգին.
օտարերկրյա նվաճողներից ազատագրվելու
համար հայ ժողովուրդը հարատև անդուլ
պայքար սկսեց, որի ընթացքում աչքի ըն-
կան ինքնազոհ, մինչև վերջը իրենց հայրե-
նիքին նվիրված ոչ սակավաթիվ զավակներ
ու. դուստրեր, Հարավային Հայաստանում,
պանծալի Սասունցի Դավթի հայրենիքում,
իշխան Թոռնիկ Մամիկոնյանը, ժողովրդա-
կան զինված ուժերի գլուխն անցած, շրջա-
կա հարթավայրերը՝ Տարոնը (Մշո դաշտը),
ձապաղձուրը և այլն հաջողությամբ մաք-
րում էր թշնամիներից: Սասունցիները
երկար ժամանակ անձնվիրաբար պաշտպա-
նում էին հայրենի լեռներն ու ձորերը:
Հյուսիսային Հայաստանում, որի մի մասը
դեռևս վրաց Դավիթ II Շինող թագավորի
(1089—1125) ժամանակներից ի վեր մտել
էր Վրաստանի ֆեոդալական միապետության
կազմի մեջ, ուժեր էին կուտակվում, որոնք

կոչված էին երկրի մեծ մասում ոչնչացնելու
օտարերկրյա տիրապետութիւնը, մի բան,
որին նպաստում էր այն ժամանակ Մերձա-
վոր Արևելքում ստեղծված քաղաքական
դրութիւնը:

Արևմուտքում սկսված խաչակրաց ար-
շավանքները ստիպեցին սելջուկներին իրենց
ուժերի մեծ մասը քաշել դեպի Ասորիք
և Պաղեստին, որի հետևանքով նրանց ազ-
դեցութիւնն զգալիորեն թուլացավ Հայաս-
տանում և Կովկասում: Հայրենի երկրից առ-
բազրված հայ ժողովրդական մասսաները
Փոքր Հայքում և Կիլիկիայում երկարատև
պայքարից հետո թոթափեցին սելջուկների
և բյուզանդացիների ծանր լուծը: Ստեղծվեց
հայկական մի նոր ինքնուրույն պետութիւն
— Կիլիկյան Հայաստանը, որը Լևոն II Մե-
ծագործ թագավորի (1187—1219 թ.թ.) և
նրա հաջորդների օրով ապրում էր ծաղկ-
ման ամենաբարձր շրջանը:

Այդ նույն ժամանակ իր հզորութեան
զաղաթնակետին է համարում վրաց պե-
տութիւնը: Դավիթ II Շինողը և նրա հա-

ջորդները, նրանց հարած հայ ֆեոդալների հետ միասին, հաջող պատերազմներ են մղում Անդրկովկասում հաստատված թուրք-սելջուկների դեմ. այդ պատերազմների հետևանքով XII դարի ընթացքում և XIII դարի սկզբին հայերին ու վրացիներին հաջողվում է Վրաստանը և բուն Հայաստանի մեծ մասը մաքրել թշնամուց։ Հայկական հողերի մեծ մասը սելջուկյան նվաճողներից մաքրելու համար մղվող այդ պայքարն ավարտվեց հայ սկանավոր զորավար Զաքարիա Երկայնաբազուկի գլխավորությամբ։

Համակովկասյան գործի, Կովկասի երկու քաղաքակիրթ ժողովուրդների՝ հայերի և վրացիների համերաշխությամբ համար մարտնչողներին շարքում առավել աչքի ընկնող տեղ է գրավում հայ մեծ զորավար Զաքարիա Երկայնաբազուկը, որը հավասարապես սիրված է և՛ հայերի, և՛ վրացիների կողմից։

Զաքարիան որդին էր հայտնի Մարգսի, «Մեծ» մակդիր կրողի, որը սկզբում հանդիսանում էր Խոփոռնի ամրոցի համեստ տերը, այն ժամանակ Օրբելիների (Օրբելյանների)

հզոր օտան իշխանների վասալներից մեկը՝
Խոթոռնի ամրոցը գտնվում էր Լալվարի
գեղատեսիլ գագաթի հյուսիսային անտա-
ռապատ ճյուղավորության վրա։ Այդ ամ-
րոցում ապրում էր Սարգիս «Մեծի» բազ-
մանդամ ընտանիքը։

Զաքարիայի մայրը, տիկին Սահակդուխ-
տը, սիրում էր Արծրունիների նախարարա-
կան հին տոհմից, այն ճյուղից, որը Դավիթ
II Շինոլի օրով տեղափոխվեց հյուսիսա-
յին Հայաստան և նրանից իբրև ժառանգա-
կան կալվածք ստացավ Մահկանաբերդ ամ-
րոցը (Ալստե գետի հովտում) և Հաղբատի
վանքը՝ իրենց շրջակայքով։ Այդ Արծրունի-
ների ժառանգական արտոնությունը Վրաս-
տանի մայրաքաղաքի, Թբիլիսիի ամիրա-
ների (քաղաքապետների՝ «շահապ քաղաքին
Տըվխեաց») պաշտոնն էր։ Այդ պաշտոնը վա-
րել էին նրա հայրը՝ Վահրամ Արծրունին և
եղբայրները՝ Վասակն ու Ամիր-Քուրդը
(նույն ինքը՝ Աբուլ-Հասանը)։ Վրաց ար-
քունիքում առանձնապես ազդեցիկ դեմք էր
Ամիր-Քուրդ Աբուլ-Հասան Արծրունին։ Վրաց

արքունիքում Ամիր-Քուլդի ունեցած ուժեղ
կապերի և ազդեցության շնորհիվ նրա հռան-
դուն և ձեռներեց փեսա Սարգիս «Մեծի» առ-
ջև ռազմական և քաղաքական գործունեու-
թյան լայն ասպարեզ էր բացվում:

Դավիթ II Շինողի (1089—1125) ժա-
մանակներից ի վեր Վրաստանը դառնում է
Ֆեոդալական միասնական միապետություն
և պայքար է մղում խոշոր ֆեոդալ ավա-
զանիների—«դիդբուլների» անջատողական
ձգտումների դեմ:

Կենտրոնական իշխանության այդ հզո-
րացումն ամենից ավելի անհանդստացնում
էր վրաց ֆեոդալական բարձր արիստոկրա-
տիային (դիդբուլներին), հատկապես Օրբել-
ների տանը, որի ժառանգական իրավունքն
էր դարձել Վրաստանի ամբողջ բանակի պե-
տի՝ ամիրսպասալարի (սպարապետի) վեզի-
րությունը: Օրբելները դլխավորում էին
կենտրոնական իշխանության դեմ ուղղված
շարժումները: Գեորգի III-ը (1156—1184 թ.թ.)
երկաթե բազկով ընկճեց ավազանու դիմա-
դրությունը: 1177 թվականի դավադրու-
թյունը:

նը, որի գլուխ էր կանգնել Իվանի Օրբելին, ճնշվեց, իսկ նրա կաղամկերպողները չարաչար պատժեցին:

Այդ դավադրությունը ճնշելու գործում Գեորգի III-ին անդնահատելի ծառայություն մատուցեցին վերը հիշված Ամիր-Քուրդ Արծրունին և նրա փեսա Սարգիս «Մեծ» իշխանը իր որդիների ու եղբորորդիների հետ միասին:

Ամենակրիտիկական ժամին, երբ ամիր-սպասալարների մայրաքաղաք Լոռին պաշարված էր թագավորական զորքերով, Սարգիս «Մեծը» մեկն էր նրանցից, որոնք առաջինը լքեցին դավադիրների առաջնորդ Իվանի Օրբելուն և անցան Գեորգի III-ի կողմը: Վերջինս բարձր գնահատեց նրա մատուցած ծառայությունը և մոտեցրեց իրեն: Չաքարիայի հայրը պետական գործունեության ասպարեզ էր իջել արդեն 1161 թվականին, երբ նա նշանակվել էր Անի քաղաքի կառավարիչ և իր սրով խիզախ մարտիկի ու զորավարի հռչակ էր ստացել: Սարգիս «Մեծը» վրացիների կողմից ստա-

յալ «Մխարգրձեի», այսինքն «Երկայնա-
բազուկ» մականունը: Հայերը Ջաքարիայի,
Սարգսի հոր (ամիրսպասալար Ջաքարիայի
սպայի) անունով այդ տունն անվանում էին
«Ջաքարյան»: Թամար թագուհու (1184 —
1213 թ.թ.) ժամանակներից ի վեր ամիր-
սպասալարի պաշտոնը դարձավ Մխարգըր-
ձեիների կամ Ջաքարյանների տոհմի ժա-
ռանգական արտոնությունը:

1184 թվականին Գեորգի III-ը մեռավ և
դա՛ն բարձացավ նրա դուստր Թամարը: Այս
գեղեցիկ և իմաստուն կինը կարողացավ իր
շուրջը համախմբել կենտրոնացված պետու-
թյան համար պայքարող տարրերին և ավելի
հզորացնել իր թագավորությունը:

Ամիրսպասալարի պաշտոնը թագուհին
հանձնեց Սարգիս Երկայնաբազուկին՝ Ջա-
քարիայի հորը: Այդ պաշտոնի հետ մեկ-
տեղ նա որպես ժառանգական սեփականու-
թյուն ստացավ երեւմտի կյուրիկյան թագա-
վորությունը: Կոսի քաղաքը
դառնավ «Հայոց և Վրաց ամիրսպասալար»-

ների, Սարգիս «Մեծի» և նրա հաջորդների
կենտրոնը:

Արքունիքում մեծ հեղինակություն և
ազդեցություն վայելելով, Սարգիս Երկայ-
նաբազուկը կարողացավ հասնել այն բանին,
որ Թամարը իր արքունիքը վերագարձրեց
նրա աներոջը՝ Մահկանաբերդի ու Հաղ-
բատի շնորհագրելված տիրոջը՝ Ամիր-Քուրդ
Աբուլ-Հասան Արծրունի իշխանին, որը նո-
րից ստացավ Թբիլիսի քաղաքի ու Քարթ-
լի կառավարչի պաշտոնները և դարձավ ֆի-
նանսների մինիստր (և Երեսթավաց-երեսթավ
և ամիրայից ամիրա Քարթլիի և Թբիլիսիի...
մեծուրձլեթ-ուխուցես):

Այդ ուժեղ և ազդեցիկ դեմքի հանդես
գալու հետևանքով, արքունիքում էլ՝ ավելի
պիտի ուժեղանար ոչ միայն նրա փեսա
Սարգիս Երկայնաբազուկի, այլև նրա որ-
դինների՝ Ջաքարիայի և Իվանեի դիրքն ու
ազդեցությունը:

Այդ հայ նշանավոր ֆեոդալ Ամիր-Քուրդ
Աբուլ-Հասանի նախաձեռնությամբ Թամարը
1185 թվականի վերջին ամուսնացավ Ռուս-

տով-Սուգդական Ռուսիայի իշխան Անդրեյ
Բոգոլյուբսկու (1157 — 1175 թ.թ.) որդի, ռուս
իշխան Յուրիի (Գևորգի) հետ:

Յուրի Բոգոլյուբսկին, «Թագաւոր վրաց»
եղած ժամանակ, գլխավորում էր Հայաս-
տանի սելջուկյան նվաճողների դեմ ուղղված
ռազմական արշավանքները: Նրա ղերշի տակ
երիտասարդ եղբայրներ Զաքարիան ու Իվա-
նեն մարտնչում էին Դվին քաղաքի սել-
ջուկյան ամիրայի դեմ: Հայաստանի հին
մայրաքաղաքն աղատագրված էր օտար-
երկրյա նվաճողներից: Սակայն, Յուրիին
չվիճակվեց երկար թագավորել՝ 1188 թվին
նա աքսորվեց Կոստանդնուպոլիս, իսկ թա-
մար Թագուհին ամուսնացավ օսման ար-
քայորդի Իսվիթ Սոսլանի հետ:

Յուրիի իրավունքները պաշտպանելու
պատրվակով դիդերուլների ձեռնարկած
նոր ասպատամբության ժամանակ Զաքարիա
և Իվանե եղբայրներն իրենց ցույց տվին
որպես թագուհուն ամենից ավելի նվիրված
մարդիկ: Նրանք հանդես եկան իրենց կրթ-

քով պաշտպանելու պետութիւնը և թաղա-
կիւր գեղեցկունու պատիւը:

Թմկաբերդի (Թմոզվի) մոտ, վճռական
մարտում, Իվանեն իւր վրա ընդունեց հար-
վածը, նա վիրավորվեց, բայց թշնամուն ստի-
պեց նահանջել, իսկ ապստամբութիւնը կազ-
մակերպողներին՝ անձնատուր լինել:

Այդ ժամանակ «Մեծն Սարգիս... ամիր-
սպասալար Հայոց և Վրաց»-ը արդէն մեռած
էր: Նա վախճանվեց 1187 թ. և թաղվեց
Սանահնի վանքում, իրենից հետո թողնելով
բազմաթիւ ժառանգներ: Նա թողեց երկու
տղա և չորս աղջիկ: Նրանցից յուրաքան-
չյուրը դարձավ Ֆեոդալական նոր տոհմի
հիմնադիր: Նրանցից մեծը, Զաքարիա Նը-
կայնաբագուկը, վերևում հիշված 1191 թ.
ապստամբութիւնը ճնշելուց հետո, ժառան-
դեց հոր պաշտոնը:

Թամար թագուհու պատմագիր Բասիլի
ասելով՝ «Բերեցին ամիրսպասալար Սարգիս
Մխարբըձելու երկու որդոց՝ Զաքարիա և
Իվանեին, մարդկանց իմաստուն և քաջ,
որոնք շատ փորձված էին պատերազմներում և

ազգովին հավատարիմ թագավորներին: Այս
պատճառով նրանք հույժ սիրված էին թա-
մարի նախնիների (պապերի և հայրերի) կող-
մից: Թագուհին, պտամազբի ասելով՝ «շնոր-
հեց Ջաքարիային ամիրսպասալարություն»՝
նրա հոր բոլոր կալվածների հետ միասին:

46823
Ջաքարիա երկաջնաբազուկը դարձավ
«պատրոն» (կամ «պարոն»), այսինքն՝ Լոռի
քաղաքի իշխանը: Նրան շնորհվեց նաև
Ռուսթավի քաղաքը: Ամիրսպասալարի պաշ-
տոնի հետ մեկտեղ շուրջ 1203 թվականին
Ջաքարիան ստացավ մանդատուրթա-խու-
յեսի պաշտոնը՝ կնքապահի վեզիրի և
թագուհու անձնապահ խմբի պարագլխի
պաշտոնը: Ամիրսպասալարի պաշտոնն ա-
ռանձնապես մեծ նշանակություն ստացավ
թաւար թագուհու օրով, երբ նա ի վիճակի
չէր անմիջակհանորին մասնակցելու ռազ-
մական արշավանքներին և ղեկավարելու
ճակատամարտերը: Ամիրսպասալարը գլխա-
վորում էր ռազմական բոլոր արշավանքներն
ու պատերազմները:

Արշավանքի դուրս գալիս նա թագուհուց

ստանում էր արքայական դրոշակը և օրհնություն, իր հրամանատարության տակ նա ունեւր բազմաթիւ զորավարներ — սպասալարներ, ֆեդդովական զորագնդերի ղեկավարներ։ Արշավանքից վերադառնալուց հետո ուղղական ավարի ամենաարժեքավոր մասը մատուցվում էր թագուհուն։

Ջաքարիա Երկայնաբազուկին, որպես մանդատուրթա-խուցեսի, ենթարկվում էին բազմաթիւ «մանդատուրներ», մանր պաշտոնյաներ, որոնք պահպանում էին թագուհու անձը։ Նա էր հրատարակում թագավորական հրամանագրերն ու կարգադրությունները, նրան ենթարկվում էին բազմաթիւ պալատական աստիճանավորներ։ Ունենալով այդքան մեծ լիազորություններ, Ջաքարիա Երկայնաբազուկը հանդիսանում էր առավել ազդեցիկ դեմքը և պետության փաստական ղեկավարը։

Նույնպիսի շնորհումների և պաշտոնների միջոցով բարձր դիրքի էին արժանացել Երկայնաբազուկների տան մյուս անդամներն ևս։ Իվանե Երկայնաբազուկը, Ջաքարիա

ամիրսպասալարի եղբայրը, 1191 թ. թագուհուց ստացավ մսախուրթա-խուցեաի (դռան մինիստր) պաշտոնը, այլև հողային ընդարձակ տարածություններ Աղստևի ու Ձորագետի (Դեբեդի) հովիտներում: Կային ամրոցը (այժմյան Դիլիջանից ոչ հեռու) դառնում է Իվանիի և նրա հաջորդների կենտրոնը:

Թագուհին չմոռացավ նաև նրանց տոհմակիցների, Սարգիս Երկայնաբազուկի եղբոր՝ Վահրամի որդիների՝ Զաքարիայի և Սարգսի մատուցած ծառայությունները: Զաքարիան (Վահրամի որդին) որպես սեփականություն ստացավ (1187 թ.) մի ընդարձակ տերիտորիա, որը տարածվում էր Դեբեդ գետից մինչև Շամքոր քաղաքը: Նրա և նրա հաջորդների կենտրոններն էին Գազ և Քարհերձ ամրոցները: Նրա գլխավորած ֆեոդալական տոհմը վրացիները կոչում էին «Գագեի» (այսինքն՝ Գագեցի), իսկ հայերը՝ «Վահրամանց տուն»: Վերջապես, նրա եղբայր Սարգիսը թագուհուց որպես ժառանգություն ստացավ (1191 թ.),

Զավախքի շրջանը՝ կենտրոն ունենալով
 Թմկաբերդը (Թմոզվի): Սարգսի հաջորդ-
 ներին վրացիները կոչում էին «Թմոզվելի»
 (այսինքն՝ Թմոզվեցի): Այս տոհմը ուղղա-
 փառություն ընդունեց և XIV դարից սկսած
 վրացականացավ: Այս Սարգսի թոռը վրաց
 գրականության պատմության մեջ հայտնի
 փելիտոփա և բանաստեղծ Սարգիս Թմոզվելին
 էր: Սրան է վերագրվում Շոթա Ռուսթա-
 վելու հանճարեղ «Ընձենավորի» առաջին
 խմբագրությունը և մի քանի գլուխների
 հեղինակությունը, լացի այդ՝ սա գրել է
 մեղ չհասած «Դիլարիանի» պոեմը և թարգ-
 մանել է պարսկերենից վրացերեն՝ հռչակավոր
 պարսից բանաստեղծ Ֆահրեդդին Գուրգանի
 «Վիս-ո-Ռամին» («Վիսրամիանի») վեպը:

Վերը հիշված «չորս Մխարգրձեները»
 դարձան Թամարի թե ու թիկունքը, նրա
 երգվյալ պաշտպանները: «Մանգասուր-
 թա-խուցիս ու ամիրսպասալար Հայոյ
 և Վրաց» Զաքարիայի մշտական բնա-
 կատեղին գտնվում էր Լոռի քաղաքում
 (այժմյան Ստեփանավանի մոտ), որի շրջա-

կայքում, Ագարակ վայրում (այժմյան
Հնեվանքի շրջակայքը) սովորաբար իր սով-
որված ժամանակն անց էր կացնում Թամար
Թագուհին: Ագարակը նրա ամառային
բնակատեղին էր:

Զաքարիա Երկայնաբազուկը ոչ միայն
հանճարեղ ղրափար էր և ստրատեգ, այլև
նույնչափ հանճարեղ քաղաքական գործիչ
էր և իր բարձր դիրքը նախ և առաջ ի
սպաս էր դնում իր հարազատ հայ ժողովրդին
օտարերկրյա հարստահարողներից ազատա-
դրելու գործին: Զաքարիայի այդ գործու-
նեություն մեջ խոշոր դեր խաղաց այդ
դարաշրջանի մեծ հայրենասեր և հումանիտ
Մխիթար Գոշը (1130—1213 թ. թ.): Մխի-
թար Գոշ վարդապետին մեծապես հովանա-
վորում և նրա գիտնականություն հանդեպ
ակնածանք էր տածում Զաքարիա Երկայ-
նաբազուկի քեռին՝ Ամիր-Քուրդ Աբուլ-Հու-
սսինը, որի կարվածներում էլ կառուցվեց
Մխիթար Գոշի վանքը՝ Նոր Գետիկը: Իր
քեռու միջոցով Զաքարիա Երկայնաբազուկը
ծանոթացավ մեծ գիտնականի հետ և այդ

ծանոթությունը հայ ժողովրդի երկու մեծ
զավակների միջև մինչև նրանց կյանքի
վերջը մնաց ջերմ, յի հարգանքով և փոխա-
դարձ վստահությամբ: Մխիթար Գոշը դար-
ձավ Զաքարիա Երկաթաբազուկի հոգևոր
հայրը և նրա աչքում մեծ հեղինա-
կություն էր վայելում հայ ժողովրդին
վերաբերող բոլոր հարցերում:

Մխիթար Գոշը գիտակցում էր մեծ գո-
րավարի, որպես Հայաստանի և հայ ժողո-
վրդի քաղաքական ինքնուրույնության վե-
րածնությունը հետապնդող համաժողովրդ-
ական շարժման առաջնորդի, ձեռնարկում-
ների ամբողջ վեհությունն ու մեծությունը:
Մխիթար Գոշն իր խորհուրդներով ու հեղի-
նակությամբ ազդում էր Զաքարիա Երկաթ-
աբազուկի քաղաքական գծի վրա, այն
ուղղելով դեպի ժողովրդի ռեալ շահերին
ու կարիքներին ծառայող հունը, որ, իբր
հերթին, բարձրացնում էր իրեն՝ Զաքարիա-
յի հեղինակությունը ժողովրդական մաս-
սաների մեջ: Եվ Հայաստանում, ամենու-
րեք, ուր էլ հայտնվեի Զաքարիա Երկաթ-

նաբազուկը, ժողովուրդը նրան ընդունում էր որպես փրկարարի:

Երեսուն տարի շարունակ Զաքարիա Երկայնաբազուկը գլխավորել է հայկական ու վրացական զորքերին և բազմաթիվ արշավանքներում իր համար վաստակել է հերոսի անուն: Նա չի իմացել և ոչ մի պարտություն և ոչ մի նահանջ: Զաքարիան դարձել էր Հայկական սարահարթի սելջուկյան տիրակալների ահն ու սարսափը:

Ամիրսպասալար Զաքարիայի ազատագրական արշավանքներն ուղղված էին, առաջին հերթին, դեպի Կուր և Արաքս գետերի հովիտը, դեպի այն շրջանները, որոնք բնակեցված էին գրեթե միայն հայերով:

Այսպես, օրինակ, դեպի Արաքսի հովիտը ձեռնարկած իր արշավանքներից մեկի ժամանակ, ամիրսպասալար Զաքարիան ճանապարհին հանդիպեց Դվինի, Բջնիի, և Ամբերդի թշնամի հրոսակներին, որոնք գնում էին կողոպտելու և թալանելու կարավանները: Հայկական և վրացական զորքերը ոչնչացրին նրանց և դրանով իսկ սեղան

բնակչությանը փրկեցին նոր ասպատակու-
 թյուններէց ու կողոպուտներէց: Արարա-
 տյան դաշտի հայ բնակչությունն այնպիսի
 թշվառ վիճակում էր դտնվում, որ հնարա-
 վոր չէր հարկերի տակ դնել նրան: Ամիր-
 սպասալար Զաքարիան գյուղերն ու քաղաք-
 ներն ազատում էր հարկերից: Ժողովրդի
 մասին ցուցաբերած այդ հոգացողությամբ
 Զաքարիան դարձավ ընդհանուր ահաւան
 հարգանքի և սնտահման սիրո առարկան:
 Այս ճանապարհով սելջուկներից ազատա-
 դրվեցին և ժաքրվեցին՝ Ամբերդը (1196 թ.),
 Բջնին, Արարատյան և Շիրակի դաշտերը
 (1201 թ.): 1199 թ. Անիից վերջնականա-
 պես արտաքսվեցին Շաղաղյանները, և հա-
 յերի քաղաքական ու կուլտուրական կյանքի
 այդ հոշակավոր կենտրոնը դարձավ Զա-
 քարիա երկայնարագուկի և նրա հաջորդ-
 ների մայրաքաղաքը: Անիի բնակիչները
 քաղմիցս խնդրում էին վրաց թագավոր-
 ներին՝ ազատել իրենց օտարերկրյա լծից:
 Դեռ 1123 թ., անեցիկների խնդրով, Դավիթ
 II Շինող թագավորը գրավեց քաղաքը և

այնտեղից արտաքսեց տեղական ամիրային։
Երբ Դավիթ II Շինդի մահաց հետո, 1124
թվին Փաուլունը, արտաքսված ամիրայի
որդին, Խորասանից գալով պաշարեց քա-
ղաքը, անեցիները ոտքի ելան կրճքով պաշտ-
պանելու հարազատ քաղաքը։ Պատմագրու-
թյան էջերում առանձնապես արձանագրված
է Անիի բնակչուհի, պանծալի հայուհի
Այծեմնիկի անունը, որը կանգնելով քաղա-
քի պարիսպների վրա, արիաբար պաշտ-
պանում էր քաղաքը և, չնայած խոցվել էր
նետերով, բայց շարունակում էր հերոսա-
բար ետ մղել թշնամու գրոհները։

Անին հաջողվեց վեջնականապես գրա-
վել այն լանից հետո, երբ Հայաստանի մի
զգալի մասն արդեն մաքրված էր սելջուկ-
ներից։ Վերջապես 1203 թվականին Հայաս-
տանի հին մայրաքաղաք Դվինից դուրս
վաճաղվեցին մուսուլմանական ամիրաները։
Այս նվաճումներից հետո Կարսի բնակիչ-
ների համար հեշտ էր խնդրել Թումարին
քաղաքը վերցնել իր հովանավորության տակ։
Տեղական մուսուլման ամիրան փախավ,

քաղաքի կառավարիչ նշտնակվեց զահաժա-
ռանգը, երիտասարդ արքայադս Գեորգի
Լաշան (1204—5 թ.), իսկ փաստական
կառավարիչ-ամիրան հայ վաճառականների
ներկայացուցիչն էր:

Հայերի և վրացիների ռազմական հաջո-
ղություններն առանձնապես անհանդուրա-
յուն էին Ելտուղյաններին, Իրանի աթա-
բեկներին, դեսլի որոնց սահմաններն էին
ամենից ավելի արշավանքներ դործում հայ-
կական ու վրացական զորքերը: Օգտվելով
Շիրվանում տեղի ունեցած ուժեղ երկրա-
շարժից, Արու-Բեքը աթաբեկը 1195 թվա-
կանին տիրեց շիրվանշահների մայրաքա-
ղաք Շամախուն: Շիրվանշահ Ախսի-
տանը փախավ Թամարի մոտ և խնդրեց նրա
օգնությունը: Թամարը խոստացավ օգնել,
և ամիրասպասար Զաքարիան պատրաստ-
վեց նոր արշավանքի:

Արու-Բեքը աթաբեկը հսկայական զորք
հավաքեց, նոր դաշնակիցներ հավաքագրեց,
այդ թվում նաև Բաղդադի խալիֆին, որն
ուզարկեց իր դրոշակն ու զորքերը: Թամարը

նույնպէս կարողացաւ մեծ ուժեր հաւաքել։
 Բացի վրացական ու հայկական զորքերից,
 հաւաքազորվեցին նաև ղրիչախական ու կով-
 կասյան լեռնականների վարձկան զորքեր։
 Այս արշավանքի մեջ ավելի, քան մյուս-
 ների, արտահայտվեց սելջուկյան պետու-
 թյունների միավորյալ ուժերի դեմ ուղղված
 պայքարի համակովկասյան բնույթը։ Ամիր-
 պասալար Զաքարիան և Թամարի երկրորդ
 ամուսինը, Դավիթ Սոսլանը¹, մեծաքանակ
 և բազմացեղ զորքի գլուխ անցած, արշա-
 վանքի դուրս եկան։ Պատերազմող կողմե-
 րի զորքերն իրար հանդիպեցին Վրաստանի
 սահմանում, Շամքոր քաղաքի մոտ, ուր և
 տեղի ունեցավ հռչակավոր ճակատամարտը։
 Կովկասյան դաշնակից զորքերը գործ ու-
 նեին ուժեղ հակառակորդի հետ։ Քաղաքի
 դռները մոտ նրանք դժվարին կացության
 մեջ ընկան և մեծ կորուստ ունեցան։ Իրու-
 թյունը դառնում էր անհուսալի։ Բայց հան-
 կարծ, այդ դժվարին մոմենտին, Թարմ
 ուժերով վրա են հասնում ամիրապասալար

¹ Եղել է նրա ամուսինը 1191—1207 թ.թ.։

Զաքարիան և նրա եղբայր Իվանեն: Սկըս-
վում է Ջարդը, որի ընթացքում, երկու եղ-
բայրների ղեկավարության տակ զործող
զորքերը ճոշնապնում են թշնամու զորքերի
կեսը: Թշնամիների ողջ ֆուգաձ մասը ղի-
մում է փախուստի:

Հաղթողները հակառակորդ ավար և մեծ
թվով զերիներ են վերցնում: Հաղթական
ավարի մեջ է լինում նաև խալիֆի դրոշակը:

Հաջորդ առավոտյան Շամքորի ավազու-
նին քաղաքի բանակները հանձնում է հաղ-
թողներին, և զորքերը մտնում են քաղաքը:

Շամքորի անկումից հետո, առանց մար-
տի հանձնվում է ոչ հեռու գտնվող, առե-
տքական խոշոր կենտրոն հանդիսացող Գան-
ձակ քաղաքը (այժմյան Կիրովաբադը):
Քաղաքի ավազանին, խոշոր վաճառական-
ները, ինչպես և ղազին, ամիրսպասալար
Զաքարիային և Դավիթ Սոսլանին դիմա-
վորում են խնդրագրով: Նրանք, գեանա-
տարած, խնդրում են կյանք շնորհել իրենց և
խնայել քաղաքը: Հաղթական զորքերը մըա-
նում են քաղաք և իրենց հաղթանակը տու-

նում սուլթանի պալատում: Ամիրսպասալար
Ջաքարիա Երկայնաբաղուկը նվաճվածներից
հօգուտ գանձարանի հնգորդ վերցնելով,
հեկայական ավարով վերադառնում է Թա-
մարի մոտ:

Թաղուհին այդ ժամանակ գտնվում էր
իր ամառանոցներից մեկում՝ Տաբախմեկա
գյուղում (Թբիլիսիից ոչ հեռու), այստեղ
սուրհանդակը Թագուհուն ուրախալի լուր է
բերում տարած հաղթանակի մասին: Պատ-
մագրի տակով՝ հաղթողներն իրենց հեռ-
այնքան մեծ ավար էին տանում, որ Թբի-
լիսիի շրջակայքն ի վիճակի չէր տեղավո-
րելու այն: «Թբիլիսիի շուրջը բոլոր դաշ-
տերը լցվեցին [ավարով] և այլևս չէին կա-
րողանում անդավորել մարդկանց, ձիերին,
ջորիններին և ուղտերին... Անվանի մարդիկ,
Ջաքարիան և Իվանեն... Դիզուբեի դաշ-
տում շարք կանգնեցրին բարձած ուղտերին,
ձիերին, բոլորը պաճուճանքադարդ, և շար-
քի մի ծայրը հասնում էր մինչև Հավճալա:
Նույնպես [կանգնեցրին գերի] ամիրաներին,
ամեն մեկը իր դրոշակով. դրոշակներինց տ-

ռաջինը խաչիֆինն էր, այնուհետև աթա-
բեկինը և այլն, մեկը մյուսի հետևից: Քա-
ղաքի դռներից մինչև Գլգանի ձորը շարե-
ցին գերիներին»:

Վերցված ավարը բաշխվում էր գոյու-
թյուն ունեցող սովորույթի կարգով, որը այդ
ժամանակներում օրինականացվեց Մխիթար
Գոշի «Դատաստանադրքում» (մասն II, էջ
311—314):

Թամար թագուհին նվեր էր ստանում
ավարի առավել արժեքավոր մասը, որ նրան
մատուցում էին զորավարները: Հաղթական
շորքերը մտնում էին քաղաք և նրանցից
յուրաքանչյուրը, պատմագրի ասելով՝ «սկը-
սում էր թագուհուն նվեր տալ իրեն բաժին
ընկած ավարից՝ ոսկի, դարգարանք, կա-
հույք, թանկագին քարեր ու մարդարիտներ
անգին, ողազրահ, սաղավարտ, փորձարկ-
ված սուսեր, գույնզգույն ոսկեկար գործ-
վածքներ ու թանկարժեք զգեստներ, ձիեր
ու շորիներ, թանկարժեք քարերով ու մար-
դարիտներով շարած ոսկե մանյակները, զա-
նազան խնկաբեր ծառերի անուշահոտ յու-

ղեր, որ բերում էին պղնձե անոթներով»։
Դրանից հետո երկար ժամանակով վերանում
է Իրանի կողմից սպառնացող վտանգը։
Շամքոր քաղաքը, այլ հողերի հետ միասին,
Թամարը պարգևում է Զաքարիա Երկայնա-
բազուկի հորեղբորդուն՝ Զաքարիա «Գա-
պելուն»։

Պատմադրի պատկերավոր արտահայ-
տությամբ՝ «Գանձակում և Պարտավում
նույնիսկ փոքր երեխան չէր կարող լաց
լինել մոր մոտ, որպեսզի խաղաղությունը
չխախտի հրկրում»։ Թուրքերը նույնպես չէին
համարձակվում ֆլասեկ արտավայրերը Իո-
րա և Կուր գետերի ափերին»։

Իրանի կողմից նոր ներխուժումների
վտանգը վերացնելուց հետո, պետք էր ուշա-
դրություն դարձնել արևմտյան հարևանի՝
Ռուսի սուլթանության վրա։

Կարա քաղաքի միացումը Վրաստանին՝
մեծ անհանգստություն է առաջ բերում
վերջինիս սահմանակից սելջուկյան Կարնո-
քաղաքի (այժմյան էրզրումը) և Երզնկա
(այժմյան էրզինջանը) ամիրայություն-

ներում, որոնք 1201 թվականին նվաճվե-
 ցին Ռուսի սուլթան Ռուքն-էզ-զին
 (1200—1203) կողմից և այդ ժամանակից
 սկսած կառավարվում էին նրա դրածուն-
 րի ձեռքով: Սրանք նրան հայտնեցին, որ
 իրենց վտանգ է սպառնում վրաց-հայա-
 կան զորքերի կողմից, որոնք քայլ առ քայլ
 Հայաստանը մաքրում էին սելջուկներից:
 Դա այն շրջանն էր, երբ Ռուսի սելջուկները
 կռիվներ էին մղում Կիլիկյան Հայաստանի
 և Նիկիայի կայսրության դեմ՝ դեպի Մի-
 ջերկրական և Սև ծովերը ելք ձեռք բերելու
 համար, որպեսզի առևտրական անմիջական
 կապեր հաստատեն Դրիմի ու հարավ-ու-
 սական տափաստանների, վենետիկցիների
 ու ձենովացիների հետ: Իր պլաններն իրա-
 կանացնելու դործում Ռուքն-էզ-զինին
 հարավում խանգարում էր առավել հզոր
 թշնամի, Կիլիկյան Հայաստանի թագավոր
 Լեոն II Մեծագործը, իսկ հյուսիս-արևել-
 քում՝ Թամար թագուհին իր համագործա-
 կից Ջաֆարիա մանդատուրթա-խուցեո և
 ամիրսպասալարով:

Ռուքն-էզ-դինը պատրաստութիւններ տեսավ մեծ արշավանք սկսելու դեպի Վրաստան, որպեսզի մեկ ընդ միշտ խորտակի նրա հպորութիւնը, որից հետո կարելի կլինէր Բյուզանդիային տիրող Թուրք իշխաններից պոկել Սև ծովի առափնյա տերիտորիան Տրապիզոնի հետ միասին:

Նախքան պատերազմն սկսելը Ռուքն-էզ-դինը վրացական պետութեան թիկունքն ուղարկեց իր հետախույզներին, որոնց օգնութեամբ սուլթանը, համատարմութեան երդումների տակ քողարկվելով, ձգտում էր ուսումնասիրել մեր թագավորութիւնը: Հետախուզութեան և նոր դորքեր հավաքագրելու համար միջոցներ չէր խնայում Ռուքն-էզ-դինը: Այդ նպատակի համար նա բացեց իր պապերի գանձարանները և անբավ քանակութեամբ ոսկի դուրս թափեց, սկսեց այն ցրել այրուծի հավաքելու նպատակով և ցուցումներ տվեց, որ սահմանված իր երկու անգամ ավելի ջոկատներ դուրս բերեն: Այսպիսով հսկայական ուժեր հավաքագրվեցին նրանից կախում ունեցող ամի-

բայութիւններէց, որոնք արշավանքի դուրս
եկան «հակառակ իրենց կամքի, լուկ սարսա-
փից դրդված»:

Նախապես վստահ լինելով իր հաղթանա-
կի վրա, Ռուքն-էգ-ղինը խիստ ամբարտա-
վանացել և զբոգող դիրք էր բռնել: Նա Թա-
մարի մոտ ուղարկեց իր դեսպանին մի հան-
դուզն և վիրավորական նամակով, որը վեր-
ջանում էր հետեյալ խոսքերով. «Սպասի-
ր իմ հատուցմանը այն հաղթանակի համար,
որ դու տարար պարսիկների նկատմամբ»:
Դեսպանը նամակը տալով Թազուհուն, վի-
րավորեց նրան, հայտարարելով, որ եթե
նա չի համաձայնի հավատալով լինել և
դառնալ սուլթանի կինը, ապա սուլթանը
նրան իր հարձը կդարձնի: Պոռոտախոսու-
թյամբ լի այդ նամակը և Թամար Թազու-
հուն դեսպանի հասցրած մեծ վիրավորանքը
համբերութիւնէից հանեցին ընդունելու-
թյանը ներկա գտնվող ամիրսպասալար
Ջաքարիային: Նա տեղից վեր կացավ, իր
ուժեղ բաղկով այնպես հարվածեց դեսպա-
նին, որ վերջինս ընկավ ուշաթափ: Ուշքի

բերված դեսպանը ետ ուղարկվեց մի նա-
մակով, որի մեջ, վերափորված թագուհին
անդեկացնում էր Ռուքն-էգ-դինին, որ ինքը
իր զորքերն ուղարկում է նրա վրա, բայց
հչ թե ծնկաչոք խնդրելու, այլ նրա գոռո-
ղամուտթյունն ու ամբարտաճանությունը
խորտակելու: Ամիրսպասալար Ջաքարիան
նամակը տալով դեսպանին, ասաց. «Վերց-
րու այս նամակը, հանձնիր Ռուքն-էգ-
դինին և հայտնիր նրան, որ մենք պատ-
րաստ ենք և կարող ենք դիմադրու թյուն
ցույց տալ»:

Ծարտակոչն ընդունված էր և հարկա-
վոր էր պատրաստվել մեծ արշավանքի: Պատ-
մադրի ասելով՝ «մի քանի օրում հավաք-
վեցին այնպիսի մարտիկներ, որոնք ճարպ-
կությամբ նմանում էին վագրերի, իսկ հա-
մարձակությամբ՝ առյուծների»:

Թամարն օրհնեց զորքերին, և ամիր-
սպասալար Ջաքարիա նրկայաբազուկը,
ընդունելով թագավորական դրոշակը, նոր
արշավանք սկսեց դեպի Հայաստան: Ռու-
քն-էգ-դինի բանակատեղը գտնվում էր

Բասենում, Բոլորպահակում (այժմյան Հասան-դալան): Երբ հայկական և վրացական զորքերն իջնում էին Բասենի անտառապատ լեռներից, մի արտասովոր տեսարան բացվեց նրանց առաջ: Ամբողջ հարթավայրը ծածկված էր թշնամու զորքերի սպիտակ վրաններով: Ռուքն-էդ-դինը առաջուց վստահ լինելով իր հաղթանակի վրա, նույնիսկ հող չէր տարել այն մասին, որ պահակախումբ դնի իր փառահեղ վրանի շուրջը: Նա ինքը ճամուռ էր իր բանակատեղում, և նրա շքախումբը փայլուն դգեստներով հոյարշավում էր նժույգներով:

Ամիրսպասալար Զաքարիան արագորեն ըմբռնեց թշնամու վիճակը և դարանաժուռ լինելով, սպասում էր պատեն դեպքի, որ պեսզի անակնկալ հարձակումով քայքայի թշնամու թիկունքը: Պայմանավորված ազդանշանից հետո հայկական և վրացական այրուձին կայծակնային արշավով անցավ թշնամու թիկունքը: Հանկարծակիի եկած թշնամին շփոթության մեջ ընկավ: Ռուքն-էդ-դինն ստիպված էր, մեծ զոհերի գնով,

շարժման ժամանակ մարտական պատրաս-
տության բերել իր զորքերը և ընդունել
ճակատամարտը: Թշնամու զորքերի թվա-
կան զգալի պերակշռությունը (ըստ պատ-
մագրի՝ 400,000 մարդ) հնարավորություն
ովեց նրան ետ մղելու հայերին ու վրա-
ցիներին: Ճակատամարտը կատաղի բնույթ
ստացավ: Երկու կողմից էլ մեծ զոհեր եղան:
Կոտորածի ժամանակ հայ և վրաց զորա-
արներից շատերի ձիերն ընկան:

Այն ժամանակ, երբ թշնամու զորքերն
զբաղված էին սեպածև իրենց թիկունքը
մտած հետևակով, ամիրտպասալար Զաքա-
րիան արագորեն փոխեց պատերազմը վա-
րելու աակտիկան: Նա իր աջրուծին բաժա-
նեց երկու մասի: Մի մասը նրա հրամանա-
տարությամբ շրջանցեց թշնամու մի թևը,
խոկ աջրուծիու մյուս մասը, Դավիթ Սոս-
լանի հրամանատարությամբ, շրջանցեց երկ-
րորդ թևը, այսպիսով, թշնամին սեղմվել
էր աքցանի մեջ: Ռուքն-էդ-գինի զորքերը,
թշնամու օղակի մեջ ընկնելով, իրարով
անցան: Նահանջի բոլոր ճանապարհները

փակված էին: Ձորքը, խուճապահար նա-
 հանջելով, իրար ստնատակ էին անուժ: Հա-
 յերը և վրացիները թշնամու գործերին ոչըն-
 չացնում են մինչև ուշ գիշեր: Պատմագրի
 ասելով՝ թշնամին հաղթողի ձեռքումն էր,
 «և այն ժամանակ կարելի էր տեսնել մի
 դարմանալի բան՝ պարտվածներն իրենք
 էին կապտում յուրայիններից նրանց, ու-
 րեք փախել էին սրի բերանից»: Հայերը և
 վրացիները Բասենի հովիտը մաքրեցին
 թշնամուց: Նրանք հետախուզում էին բո-
 լոր տեղերը և փախչողներին սպանում
 էին, իսկ մնացածներին հավաքում էին
 ճտերի պես:

Հաղթանակող հայերը և վրացիները հըս-
 կայակա՛ն ավար վերցրին: Թշնամուն ոչըն-
 չացնելուց հետո նրանք թափվեցին նրանց
 ունեցվածքի վրա, այնպիսի չափազանց
 հարուստ ավարի, որ հնարավոր չէր ոչ աչ-
 քով ընդգրկել և ոչ էլ համարել ոսկե ու
 արծաթե ամանեղենը և գործվածքների ան-
 համարությունը—կար նաև ակնակուռ ոսկե
 ամանեղեն ըմպելիքների համար, սկուտեղներ

ու ափսեաներ, անգնահատելի հարստությամբ
լեփ-լեցուն սափորներ ու կաթսաներ, Իսկ
թողած ձիերի, ջորիների և ուղտերի բազմու-
թյունը և վրանների ու գորգերի քանակը,
որ նրանք թողեցին, մի կարող էր որոշել»:

Պատմագիրը նորից վառ գույներով
նկարագրում է Թամարի համար բերված
սվարը. «ոսկով և ոսկեղեն իրերով լցրին
թագավորական գանձարանները, որովհետև,
ինչպես հող, ոսկի էին տեղում թագուհու
վրա և թանկագին քարերը չափերով լցնում
էին [գանձարանը], իսկ հունական ոսկե-
հյուս գործվածքները և այլ հագվագյուտ կը-
տորեղեններ, իբրև ինչ-որ անպետք շորեր,
կիտում էին իրար վրա»:

Թագուհին և մարտերի մասնակիցները
Թբիլիսիում հանդիսավոր կերպով տոնեցին
հաղթանակը: Նրզնկա քաղաքի (այժմյան
Էրզինջանի) գերի վերցրած կառավարչին,
Ռուքն-էդ-դին սուլթանի փեսա ամիրա
Ֆախր-էդ դինին, Թամարը «Թբիլիսիում
պահում էր որպես կալանավորի... և, ի
վերջո, այդպիսի անվանի մարդուն և իշ-

խանափորին ծախեց ձիու մի պայտով: Եր-
զընկայի և Կարնո-քաղաքի ամիրայություն-
ները դարձան Թամարին հարկատուներ:

Ռուքն-էզ-գինի դեմ պատերազմը տեղի
ունեցավ 1203 թվականին: Նա մեռավ այդ
նույն տարին, չտանելով խայտառակ պար-
տությունը:

Սելջուկների դեմ հայերի ու վրացիների
տարած փայլուն հաղթանակը և խոշոր
առևտրական կենտրոններ հանդիսացող Եր-
զընկան ու Կարնո-քաղաքը վասալական իշ-
խանություններ դարձնելը չէին կարող
հանգստացնել Թամարին:

Խաչակրաց չորրորդ արշավանքի հետև-
վանքով Կոստանդնուպոլիսը գտնվում էր
խաչակիրների ձեռքում: Նիկիայում հիմնը-
ված Անգելների կայսրությունը, իր իշխա-
նությունը պահելու և խաչակիրների դեմ
պայքարելու համար, դեմ չէր համաձայ-
նության գալու Ռուսի սուլթանների հետ,
որոնք ձգտում էին ելք ձեռք բերել դեպի
Սև ծովը: Երկյուղ կար, որ Սև ծովի ա-
ռափնյա տերիտորիան, Տրապիզոնի հետ

միասին, կարող էր գրավվել Ռուսի սել-
ջուկների կողմից, որով նրանք հնարավո-
րություն կունենային իրենց վերահսկողու-
թյան տակ առնելու Վրաստանի և Հայաս-
տանի տմբողջ կարավանային առևտուրը
սեծովյան նավահանգիստների հետ և սպառ-
նալ Վրաստանի ու Զաքարյան Հայաստանի
քաղաքական հզորությանը:

Թամարը, որ սեփական ուշադրությամբ
հետևում էր թուրացած Բյուզանդիոնում
տեղի ունեցող իրադարձություններին, չէր
կարող անտարբեր մնալ: Նա ակտիվ մաս-
նակցություն ունեցավ Բյուզանդիայի հե-
տադա բախտը որոշելու գործում: Թամարի
արքունիքում էին դատախարակվում իր մեր-
ձավոր ազգականներ Կոմնենների գինա-
տիայի կրտսեր ճյուղի ներկայացուցիչները,
Ալեքսիոս և Դավիթ Եղբայրները, որոնք
նրա մոտ ապաստան էին գտել Անգելներին
հալածանքներից: Դատախարակվելով վրաց
արքունիքում, երիտասարդ արքայազները
բարենապաստ մոմենտի էին սպասում, որ-
պեսզի հայտարարեն թագավորություն ի-

րենց իրավունքը: Ըստ երևութին այդ մասին իմացել էին Կոստանդնուպոլսում ու Նիկիայում, և Անգելները թշնամական դիրք էին բռնել Թաժարի հանդեպ:

Ռուքն-եդ-դինի դեմ հաղթանակ ապահովուց հետո, Թաժարը որոշեց մեկ ընդմիջա՝ վերջացնել իրեն անհանգստացնող՝ Տրապիզոնի ու Սև ծովի առափնյա շրջանի հարցը:

Աթոնի լեռան սրբապատկերների վերաբերյալ վեճը պատրվակ բռնելով, Թաժարը պատերազմ հայտարարեց Անգելներին և Լազիսաանն ու Տրապիզոնը նվաճելու համար նա ուղարկեց իր զորքերը, որոնց գլուխ էին կանգնած Ալեքսիոս և Դավիթ Կոմնենները՝ Անգելների տոհմական թշնամիները: Ալեքսիոսը գրավեց Սև ծովի առափնյա մաբողջ շրջանը, Ճորոխից մինչև Սինոպ և, հաստատվելով Տրապիզոնում, իրեն հայտարարեց կայսր ու դարձավ Տրապիզոնի կայսրության հիմնադիր (1204 թվականին): Միջազգային առևտրի կարավանային ճանապարհները, որոնք օկավորված էին Զաքարյանների Հայաստանի առևտրա-

արդյունաբերական խոշոր քաղաքներից՝
Մնիխ, Դվինից, Կաբսից և Լոռուց, Կարնո-
քաղաքի վրայով անմիջականորեն կապվում
էին այն դարաշրջանի կարևորագույն նա-
վահանգիստը հանդիսացող Տրապիզոնի
հետ։ Դա կատարյալ հաղթանակ էր ընդդեմ
Ռումի սելջուկների։

Այժմ Հայկական լեռնաշխարհի մեծա-
պույն մասը մաքրված էր սելջուկներից.
սկսվեց խաղաղ ստեղծագործական աշխա-
տանքի շրջանը։

Վերականգնվում են կործանված քա-
ղաքներն ու գյուղերը, կառուցվում են նոր
շրանցքներ, կամուրջներ և ճանապարհներ։
Վերականգնվում են հին պալատներն ու
տաճարները, կառուցվում են նորերը։ Այդ
շրջանի հայկական բազմաթիվ վիմագիր
արձանագրությունների մեջ խոսվում է
հին շինքերը վերականգնելու կամ նորերը
կառուցելու մասին։ Մնի քաղաքի նոր կա-
ռուցումներն իրենց ճարտարապետական
ձևավորման վեհությամբ և նուրբ կերտ-
վածքով մրցում էին հայ Բագրատունի-

ների թագավորութեան շրջանի կառույ-
վածքների հետ:

Ամիրսպասալար Զաքարիա Երկայնա-
բազուկը մեծ հեղինակութիւն էր վայելում
ոչ միայն Հայաստանում, այլև Կիլիկիա-
յում: Միիթար Գոշի խորհրդով մեծ զորա-
վարը մի շարք դավանաբանական խնդիրներ
պարզաբանելու համար համակներ ուղար-
կեց Սիս՝ Լևոն II թագավորին և Հռոմկլա՝
կաթողիկոսներին աթոռանիստը, ուր այդ
ժամանակ գտնվում էր Հովհան VI կաթո-
ղիկոսը (1203—1221) և խոով էր Լևոն II-ի
հետ:

Վերջինս, փառասիրական պլաններով
տարված, ցանկութեամբ ուներ լինել ամ-
բողջ Հայաստանի թագավորը և բուն Հա-
յաստանում իր հեղինակութիւնը պահպա-
նելու համար, շտապեց բավարարել մեծ
զորավարի միջնորդութեամբ: Դավիթ կա-
թողիկոսը (որ այն ժամանակ հաջորդել էր
կաթողիկոսական աթոռից զրկված Հովհան
VI-ին) հատկապես հրավիրեց Սսի ժողովը:
Ժողովը իր որոշումներով բավարարեց Զա-

քարիայի միջնորդութիւնը: Նրան ուղարկ-
վեցին Լեոն II-ի և Դավիթ կաթողիկոսի
նամակները՝ Սսի ժողովի որոշումների հետ
միասին: Հովհան VI կաթողիկոսն էլ իր
կողմից, ի պատասխան Ջաքարիայի առա-
ջարկութեան, շտապեց հատուկ պատվիրա-
կութիւնն ուղարկել Մինաս եպիսկոպոսի
գլխավորութեամբ, որ ժամանելով Լոռի, Ջա-
քարիային նվեր բերեց, ի թիվս այլ իրերի,
նաև մարմարի մի գոհասեղան:

Դա Ջաքարիայի խոշոր քաղաքական
հաջողութիւնն էր. դա նշանակում էր, որ
Կիլիկիան Հայաստանի ամենահեղինակավոր
անձինք Ջաքարիային ընդունում էին որ-
պես «արևելյան» երկրի հայ ժողովրդական
ազատագրական շարժման առաջնորդ և նը-
րան հաշվի էին առնում իրրև քաղաքական
մի դեմքի:

Ջաքարիան, գիտակցելով իր վրա դրված
միսիայի ողջ կարևորութիւնը, այդ գոր-
ծին ձեռնամուխ եղավ իրեն խառնվածքին
հատուկ ամբողջ կրակոտութեամբ: Նրա նա-
խաձեռնութեամբ գումարվեցին ժողովներ՝

Հոռի (1208 թ.), Անի (1209 թ.) քաղաքներում՝ Սաի որոշումներն ընդունելու համար:

Զաքարիայի, որպես զորավարի և քաղաքական գործչի, հեղինակութունն ամրապնդվեց Հայաստանում և Վրաստանում մանավանդ 1207 թվին, Թամարի ամուսին Դավիթ Սոսլանի մահից հետո: Թամարը թագավորական զահին նստեցրեց իր տանն չորսամյա որդի Գեորգի IV Լաշային: Զաքարիա և Իվանե եղբայրների դերը վրաց արքունիքում է՛լ ավելի պատասխանատու դարձավ: Իվանեն, որպես Գեորգի IV Լաշայի դաստիարակ, նրա ամենամոտիկ մարզն էր, իսկ Զաքարիան թագունու անունից վարում էր ամբողջ արտաքին քաղաքականությունը:

Այդ ժամանակները Մերձավոր Արևելքում տեղի ունեցան մի շարք փոփոխություններ, որոնք չէին կարող չհետաքրքրել Վրաստանին: Սուլթան Սալահզդդինը Նգիպատում, խաչակիրների դեմ պայքարելով, իր իշխանության տակ միավորել էր, բացի Նգիպատից, նաև Պաղեստինը, Ասորիքը և Միջագետքի ու Հայաստանի մի

զգալի մասը: Եյուքյանների նոր հարստութ-
յան հիմնադիրը, սուլթան Մալահեդդինը,
սերում էր Դվին քաղաքի քրդական ավա-
զանիներից: Մալահեդդինի եղբայր Էդիլի
որդի Մելիք-Ավխաղը 1207 թվականին
Խլաթից քշեց նախկին գինաստներին և
իրեն հայտարարեց Շահ-արմին, իրեն սյու-
զերեն ճանաչելով Եդիպտոսի սուլթանին:

Խլաթի սուլթանության մեջ տեղի ունե-
ցած փոփոխությունները խախտում էին
Հայկական սարահարթը հետազայում ևս
օտար զավթիչներից մաքրելու պլանները:
Արաքս և Կուր գետերի հովտից թուրք-սել-
ջուկյան տիրակալներին դուրս քշելուց և
Հյուսիսային Հայաստանն ազդատագրելուց
հետո, ամիրսպասալար Զաքարիա Նրկայ-
նաբագուկի ղորքերը շարունակեցին իրենց
սրշավանքները դեպի հարավ, դեպի Շահ-
արմինների պետության սահմանները, Հայ-
կական սարահարթի կենտրոնական մասում:
Զաքարիայի և Իվանի կալվածներին
միացվեցին աջնպիսի կետեր, ինչպիսիք են՝
Սուրբալուն, Բագավանը և Նախիջևանը:

1208—1209 թ. թ. գրավեցին Մանսկիքն ու Արճեշը, որտեղից զորքերը վերադարձան մեծ ավարով ու գերիներով:

Այդ քաղաքները գրավելուց հետո արշավանքներ սկսվեցին դեպի Շահ-արմենների խաթ մայրաքաղաքը:

1209 թվականին դեպի այդ քաղաքը կատարվեց մի նոր արշավանք, որը անսպասելիորեն վերջացավ հաջողությամբ: Այն ժամանակ, երբ խաթը պաշարման մեջ էր, իվանեն, Ջաքարիա ամիրսպասալարի եղբայրը, հարբած վիճակում իրիկնադեմին 20 հեծյալներով դուրս է գալիս զրոսանքի: Նրա ձին սայթաքում է, և իվանեն ընկնում է դետին: Բաղաքի աշտարակից դիտող զորքերն արագորեն շրջապատում են նրան և դերի վերցնում: Այս անսպասելի դեպքը ցնցում է Ջաքարիային: Ուրախացած Մեխիք Ավխադը պատրաստվում էր իր անվանի դերուն ուղարկել Նգիպատոսի սուլթանի մոտ: Շահ-արմենի այդ մոտադրության մասին հետախուզությունը տեղակացնում է Ջաքարիային, սա շտապում է մարդ ուղարկել

քաղաք և հախազգուշացնել, որ եթե Շահ-արմենը համարձակվի նրա եղբորը դուրս բերել քաղաքից կամ որևէ փաստ պատճառել նրան, ապա նա, Զաքարիան, ոչ մի բանի առաջ կանդ չի առնի, քաղաքը կը-կործանի, իսկ բնակչությանը կընաջնջի:

Այս սպառնալիքն ունեցավ իր ներգործությունը: Իվանեն չուղարկվեց Եգիպտոս, այլ զործը վերջացավ հաշտությամբ: Շահ-արմեն Մելիք-Ավխադը 30 տարով հաշտության պայմանագիր կնքեց ամիրսպասալար Զաքարիայի հետ: Իվանեն պարտավորվեց Շահ-արմենին վերադարձնել մի քանի բերդեր, ազատել 5,000 մուսուլման զերինների և ռազմատուգանք վճարել 10,000 դինար, վերջապես, Իվանեն պարտավորվեց Մելիք-Ավխադի հետ ամուսնացնել իր դուստրը Թամթային, որը հետագայում դարձավ Շահ-արմենների պետության իսկական կառավարիչը: Այդ պայմանագրով Վրաստանի, Հայաստանի և Շահ-արմենների պետության միջև բարի հարևանական փոխհարաբերություններ էին հաստատվում երկար ժա-

մանակով: Ամիրսպասալար Զաքարիայի ար-
շավանքը վերջացավ հարսանեական հան-
դեսներով: Իշխանուհի Թամթան ժամանեց
Խլաթ, որից հետո Իվանեն ազատվեց գե-
րությունից:

Դրանով վերջացան ամիրսպասալար Զա-
քարիա Երկայնաբաղուկի ազատագրական
պատերազմները հայկական մարզերում: Ամ-
բողջ Հյուսիսային Հայաստանը, ընդհուպ մին-
չև Մանադկերտ և Ծաղկանց լեռները (այ-
ժմյան Ալա-դաղը) մաքրվեց սելջուկներից,
և նա թևակոխեց իր զարգացման ու ծաղկ-
ման նոր շրջանը: Սելջուկներին Հյուսիսային
Հայաստանի մարզերից արտաքսելուց հետո,
այնտեղ կազմավորվեցին հայկական վա-
սալական իշխանություններ, որոնք իրենց
համար «պատրոն» (կամ «պարոն Հայոց») էին
ճանաչում ամիրսպասալար Զաքարիային և
նրա եղբայր Իվանին: Շիրակը և հարևան
մարզերը դարձան ամիրսպասալար Զաքա-
րիայի և նրա հաջորդների տոհմական սեփա-
կանությունը, իսկ Բագրատունյաց Հայաս-
տանի մայրաքաղաք Անին՝ նրա կենտրոնա-

տեղին: Ամիրսպասալար Չաքարիա Երկայ-
նաբազուկին է անցնում հայ Բագրատու-
նիներին, Անիի կառավարիչներին, «շահնշահ»
Թադավորական տիտղոսը, որը կրում են նաև
նրա հաջորդները:

Երկու եղբայրների կալվածները գնա-
լով աճում էին ի հաշիվ նոր միակցված հայ-
կական մարզերի: XIII դարի սկզբին արդեն
ամբողջ Հյուսիսային Հայաստանի տերի-
տորիան գտնվում էր նրանց իշխանության
տակ:

Ամիրսպասալար Չաքարիայի և նրա հա-
ջորդների անմիջական իշխանության տակ
գտնվող երկիրը հայկական արձանագրու-
թյունների մեջ կոչվում է «Մեծ Հայք»,
իսկ նա ինքը մերթ կոչվում է «Թադավոր
Հայոց», մերթ «Կեսաբոս», մերթ «Ինքնա-
կալ»: Արձանագրությունների մեջ նա կոչ-
վում է՝ «մանդատուրթա-խուցես, ամիրսպա-
սալար Հայոց և Վրաց շահնշահ Չաքարիա»:

Սելջուկներից մաքրված Հայկական մար-
զերից Վրաստանին միացվեց միայն կարս
քաղաքը իր մարզով: Թադավոր Թագուհու

Բասիլի Եղոսմոծղվարի պատմագրի ասելով՝
Թաժարը լիք ձեռքում պահեց միայն այդ
քաղաքն ու բերդը այն բոլորից, որ հալթու-
թյամբ վերցրել էր Չորագետից մինչև Ա-
րաքս, Դագից մինչև Գանձակ և Ջալալա-
բեց մինչև Սպիր:

Օտարերկրյա զավթիչների լծից ազատա-
դրված հայկական հողերը երկար ժամանակ
անդորրություն և խաղաղ շինարարության
հնարավորություն ստացան, որի մասին վայ-
լուն կերպով վկայում են ճարտարապետու-
թյան ու գրականության մեզ հասած բազ-
մաթիվ հուշարձաններ: Այդ անդորրությունն
ու խաղաղ շինարարության հնարավորու-
թյունը ձեռք էր բերել ամիրսպասալար Զա-
քարիան մեծ ջանքերի գնով: Վաճ նրան,
ով խախտում էր այդ անդորրությունն ու
խաղաղ աշխատանքը: Ամիրսպասալար Զա-
քարիան իր հեծելազորով, լեռնային արծվի
նման, հարձակվում և ոչնչացնում էր նրան:
Դրանից հետո թշնամին երկար ժամանակ
հիշում էր ստացած հարվածը և չէր համար-

ձակվում այլևս մտածել նոր ներխուժման
մասին:

1209 թվականն էր: Թաժար թագուհին
իր սլաւատականների հետ միասին գտնվում
էր Արեւմտյան Վրաստանում, իր կենտրո-
նառեղիներին մեկում՝ Գեղութում: Այստեղ
արքունիքը ժամանակ էր անցկացնում որ-
սորդութեամբ և ժրջություններով, թագուհու
մոտ էին նաև Զաքարիա և Իվանե եղբայր
ները: Արդարիւ խոսքն անցնում էր
որ Զաքարիան և նրա եղբայրն իրենց
տիրություններում չեն գտնվում, որոշում է
կողոպտել հոյակապ Անին:

Արդարիւ խոսքն անցնում էր, որ Զաքարի
և Իվանե եղբայրն իրենց տիրություններում
չեն գտնվում, որոշում էր կողոպտել հոյակապ
Անին: Այստեղ Զաքարի և Իվանե եղբայրն
իրենց տիրություններում չեն գտնվում, որոշում
էր կողոպտել հոյակապ Անին: Այստեղ Զա-
քարի և Իվանե եղբայրն իրենց տիրություն-
ներում չեն գտնվում, որոշում էր կողոպտել
հոյակապ Անին: Այստեղ Զաքարի և Իվանե
եղբայրն իրենց տիրություններում չեն գտն-
վում, որոշում էր կողոպտել հոյակապ Անին:

լով, սրարշավ ներխուժեցին քաղաքի կենտ-
րոնը և սկսեցին ռնոդոքաբար կոտորել,
ջարդել և գերեվարել խաղաղ, տոնական ըզ-
գեստ հագած քաղաքացիներին: Ժողովրդի
մեծ մասը այդ ժամանակ զոնվում էր
հկեղեցիներում, բայց երբ իմացան իրենց
հասած աղետի մասին, սկսեցին փրկու-
թյուն որոնել սրից: Ոմանք մտան պալատ-
ների թաղամասում զոնվող ըկրդը, մյուս-
ները փրկություն գտան քաղաքի ստորեր-
կրյա մասում — «Բարտունում», անձավային
թաղամասում, ուր ապրում էր Անիի չքա-
վորությունը: Այդ դժվարամատչելի տե-
ղերում փրկություն գտավ բնակչության մի
զգալի մասը: Թշնամին զավթեց քաղաքի
կենտրոնական մասը. այստեղ սուլթանա-
կան զորքերը՝ «եկեղեցիներում ոչխարի պես
մորթոտեցին տասներկու հազար մարդ...
բացի հրապարակներում և փողոցներում
սպանվածներից: Թշնամիներն այդպիսի լրկ-
տիությամբ ավերեցին Անին և սնքավ ա-
վարով վերադարձան իրենց տները»:

Անիի ավերման լուրը Դեղուի հասավ

միայն մեկ շաբաթից հետո: Ամիրսպասալար
Զաքարիան և նրա եղբայր Իվանեն տեղե-
կանալով այդ մասին, Վիստ ընկճվել էին,
վիշտը պատել էր նրանց, նրանց սրտերը
բոցավառվել էին և չգիտեին՝ ինչ անել:
Իսկ Թադուհին և նրա զորքերը, վշտով
ու ցասումով համակված, մորմոքում էին
մարտի դուրս գալու պարսիկների դեմ:

Թշնամու նկատմամբ ատելությամբ
վառված, Երկայնաբազուկ եղբայրները կոչ
էին անում վրեժ լուծել նրանից: Զաքա-
րիան Թամարին ներկայացրեց արշավանքի
նոր պլան, այս անգամ Արդաբիլի սուլ-
թանի դեմ, և այդ արշավանքը պիտի կրեր
պատժիչ արշավախմբի բնույթ: Ըստ այդ
պլանի՝ զորքերն արշավանքի պիտի դուրս
գային մուսուլմանական պահճն սկսվելու
օրերին, որպեսզի Արդաբիլ մտնեին «մու-
սուլմանական գատիկի օրը»: Զաքարիան և
Իվանեն, ժամանելով Անի, սկսեցին զինվել:
Երբ մուսուլմանական պահճի օրերը մոտե-
ցան, նրանք հայկական զորքերով, հայկա-
կան Գեղարքունի և Նաչեն երկրների միջով

շարժվեցին, և խուսափելու և կամրջով անց-
 նելով Արաքսը, սրարշավ տուց խաղացին
 դեպի Արդաբիլ: «Նրանք այնպես էին հաշ-
 վել ժամանակը,—ասում է պատմադիրը,
 —որ առավոտյան պիտի լիներ այդը՝ այսին-
 քըն մուսուլմանական զատիկը, իսկ զիշերը
 նրանք պիտի ժանեին Արդաբիլ: Եվ երբ,—շա-
 րունակում է նա,—մուհջինը օդը թնդեցրեց
 կանչով և հաճախակի դարձան մուղըրների
 աղաղակները, Մխարզըձեները [զորքով]
 բոլոր կողմերից վրա տվեցին ձիերով և
 առանց մարտի տիրեցին ամբողջ քաղաքին,
 բռնեցին սուլթանին, նրա կնոջը և երեխանե-
 րին, ինչպես և տիրեցին սուլթանի ու ամ-
 բողջ քաղաքի հարստությանը»: Արդաբիլցի-
 ներից վերցրած դույքը, պատմադրի ասելով՝
 «ամբողջությամբ բարձեցին հենց նրանց
 բռնակիր անասուններին», «իսկ Արդաբիլի
 սուլթանին, նրա կանանց և երեխաներին
 գերի տարան իրենց հետ: Քսան հազար
 ընտիր տղամարդ սղանեցին մզկիթներում,
 ինչպես առաջ նրանք վարվել էին Անիի
 եկեղեցիներում: Մյուս բնակչութունից էլ

ավելի շատ մարդ կոտորեցին, իսկ մյուս-
ներին գերեզմարեցին»:

Վրեժ լուծելով Անիի ավերման համար,
Զաքարիա և Իվանե Երկայնաբազուկ եղ-
բայրները «հաղթականորեն ժամանեցին
Անի և մեծ մխիթարություն պատճառեցին»
նրանց, ովքեր տուժել էին պարսկական
ավերից ու ավարից:

Անիի քաղաքացիները, որ նոր էին
միայն ուշքի եկել մոտիկ տնցյալի ավե-
րածությունից և զեռեա ոգրում էին թշնամու-
սրին զոհ գնացած մերձավորների մահը, ի-
րենց պատրոնին՝ Զաքարիային՝ դիմավորե-
ցին որպես ազատարարի և սփոփիչի՝ իրենց
վիճակված մեծ վշտի ժամին:

Զաքարիան ու Իվանեն լիովին վրեժ
լուծեցին թշնամուց և հսկայական ավարով
«ներկայացան թափառին, թաղուհիների
թաղուհուն, նվերներ ու ընծաներ մատու-
ցեցին նրան, մեծ հարստություն ակազցին
թաղուհու և նրա մերձավորների վրա»:
Շնորհապարա թաղուհին, պատմադրի

շարժվեցին, և խուզաֆերինի կամրջով անց-
 նելով Արաքսը, սրաբշով առաջ խաղացին
 դեպի Արդաբիլը «Նրանք այնպես էին հաշ-
 վել ժամանակը,—ասում է պատմագիրը,
 —որ առավոտյան պիտի լիներ այդը՝ այսին-
 քըն մուսուլմանական զատիկը, իսկ գիշերը
 նրանք պիտի ժտնեին Արդաբիլը եվ երը,—շա-
 րունակում է նա,—մուհջինը օդը թնդեցրեց
 կանչով և հաճախակի դարձան մուղըրիների
 աղաղակները, Մխարգրձեհները [զորքով]
 բոլոր կողմերից վրա տվեցին ձիերով և
 առանց մարտի տիրեցին ամբողջ քաղաքին,
 բռնեցին սուլթանին, նրա կնոջը և երեխանե-
 րին, ինչպես և տիրեցին սուլթանի ու ամ-
 բողջ քաղաքի հարստությանը»։ Արդաբիլցի-
 ներից վերցրած զույքը, պատմագրի ասելով՝
 «ամբողջությամբ բարձեցին հենց նրանց
 բեռնակիր անասուններին», «իսկ Արդաբիլի
 սուլթանին, նրա կանանց և երեխաներին
 գերի տարան իրենց հետ։ Քսան հազար
 ընտիր տղամարդ սպանեցին մղկիթներում,
 ինչպես առաջ նրանք վարվել էին Անիի
 եկեղեցիներում։ Մյուս բնակչությունից էլ

ավելի շատ մարդ կոտորեցին, իսկ մյուսներին դերեվարեցին»:

Վրեժ լուծելով Անիի ավերման համար, Ջաքարիա և Իվանես Երկայնաբազուկ եղբայրները «հաղթականորեն ժամանեցին Անի և մեծ մխիթարություն պատճառեցին» նրանց, ովքեր տուժել էին պարսկական ավերից ու ավարից:

Անիի քաղաքացիները, որ նոր էին միայն ուշքի եկել մոտիկ տնցյալի ավերածությունից և դեռևս ողբում էին թշնամուսրին զոհ գնացած մերձավորների մահը, իրենց պատրոնին՝ Ջաքարիային՝ դիմավորեցին որպես ազատաւարի և սփռիչի՝ իրենց վիճակված մեծ վշտի ժամին:

Ջաքարիան ու Իվանես լիովին վրեժ լուծեցին թշնամուց և հսկայական ավարով «ներկայացան թամարին, թագուհիներին թագուհուն, նվերներ ու ընծաներ մատուցեցին նրան, մեծ հարստություն տեղացին թագուհու և նրա մերձավորների վրա»:

Շնորհապարտ թագուհին, պաամադրի

ասելով, նրանց շնորհեց շատ բերդեր, քա-
ղաքներ ու մարդեր։

Ամիրսպասալար Զաքարիան չսահմա-
նափակվեց միայն Արդաբիլի ավերումով։
Արդաբիլի սուլթանի դեմ կատարված
արշավանքը ցույց տվեց, որ թշնամին
այնքան էլ ուժեղ չէ, որքան այդ թվում է
հեռվից։ Իրանը բզկտվել էր ներքին հա-
կասությունների հետևանքով։ Մասնատ-
վելով մանր, իրար նկատմամբ թշնա-
մական դիրք բռնած ֆեոդալական տիրու-
թյունների, երկիրը չէր կարողանում ուժեղ
դիմադրություն ցույց տալ Այս մոմեն-
տը հաշվի առավ Զաքարիան և անխոնջ
ռազմիկի ու զորավարի գլխում հասու-
նացավ մի նոր արշավանքի ծրագիր, այս
անգամ արդեն դեպի Իրանի խորքերը։
Ռազմական խորհուրդը հավանություն տվեց
ամիրսպասալար Զաքարիայի նոր պլանին։
1210 թ. աշնանը զորքերն արդեն պատրաստ
էին արշավանքի։ Թամարը «դրոշակը հանձ-
նելով ամիրսպասալար Զաքարիային»,
օրհնեց դեպի Իրան շարժվող զորքերին։

Հայկական և վրացական զորքերը, Նախիջևանի վրայով Զուղայի (Զուլֆայի) կամուրջով անցան Արաքսը, Դարադուզի հովտով նրանք մտան Իրանի Առանց մարտերի մեկը մյուսի հետեից հանձնվեցին խոշոր առևտրական քաղաքներ՝ Մարանդը, Քավրիզը, Ուջանը, Միանեն, Ջենջանը, Ղազվինը և այլն, ընդհուպ մինչև Խորասանի սահմանները։ Ամենուրեք ամիրսպասալար Զաքարիայի առաջ խոնարհում էին իրենց զորականները և ծնկաչոք գալիս էին քաղաքների խոշոր առևտրականները՝ մեծ նվերներով ու տուրքերով և հավատարմության ծառայություն էին մատուցում։ Ամենուրեք նա կայազորներ էր թողնում հայկական ու վրացական զորքերից։ Անողոք հատուցում ստացան Միանե քաղաքի բնակիչները, որոնք համարձակվել էին ոչընչացնել Զաքարիայի թողած կայազորը։

Զաքարիան Խորասանից հեռու չգնաց և շտապով վերադարձավ։ Ռազմական տեսակետից՝ հետագա առաջխաղացումը մի երկրում, ուր, վրաց պատմագրի ասելով, մարդիկ եր-

բեք չէին լսել վրացիներէ անունը, հզի էր մեծ վասնդով: Նրա գորքերը չափազանց շատ էին հեռացել իրենց թիկունքից, թշնամական թիկունքի պայմաններում նրանք կարող էին շրջապատվել և ոչնչացվել: Տակտիկական և ստրատեգիական բնույթի այլ նկատառումները մեծ զորավարին և ստրատեգին հարկադրեցին վերադառնալ, և հաղթական զորքերը նույն ճանապարհով հասան Թբիլիսի, իրենց հետ բերելով հսկայական ավար ու մեծ թվով դերիններ:

Իսանի (Հավլաբարի) պալատում Թամարը մեծ հանդիսավորությամբ ու շուքով ընդունեց անհաղթ ամիրսպասալար Զաքարիային: Թագուհուն ընծայաբերված տնթիվ-անհամար նվերները շնորհակցիչ վարմանք էին պատճառել նրան: Վրաց պատմագրի ասելով՝ «վրացիներից ոչ ոք չէր տեսել այդպիսի քանակությամբ հարստություն և թանկագին քարերի ու մարգարիտների այդպիսի շատություն»: Թամարն առատաձեռն պարգևատրեց արշավանքի բոլոր մասնակիցներին:

Դրանից հետո Վրաստանը և Հայաստանի մեծ մասը երկար ժամանակ իսադադ զարգացման շրջան են ապրում:

Մարզիկ, պատմագրի ասելով, «անհոգ լինելով, ուրախանում և ցնծում էին, և անբավ տուրքերն ու նվիրաբերությունները հարևան երկրների բնակիչներից հոսում էին դեպի նրանք»:

Մեծ Զաքարիան, կենդանության ժամանակ ճաշակեց իր հաղթանակների պտուղը: Երեք տասնյակ տարիների ընթացքում նա թշնամիներին պարտության էր մատնում իր հզոր բազկով: Իր գլխավորած աշխրան արշավանքների ընթացքում նա չգլխեք պարտություն, նա անպարտելի էր և այդպես էլ մնաց մինչև իր կյանքի վերջը: Փայլուն ռազմիկ և զորավար ամիրսպասալար Զաքարիան շրջապատված էր անհաղթ գյուցազնի և իմաստուն կառավարողի լուսապսակով:

Արդարև դժվար է պատկերացնել Թամարի թագավորությունը առանց ամիրսպասալար Զաքարիա Երկայնաբազուկի:

Այդ երկու մարդիկ ձեռք-ձեռքի կառավարում են պետութիւնը, որը նրանց օրով հասնում է իր փայլի ու վեհության գագաթնակետին:

? 1212 թվականի օրերից մի օր, հիվանդութիւնից հետո, մեռավ մեծ զորավար և մեծ պետական գործիչ Ջաքարիան: Նա շրջապատված էր իր մերձավորներով ու երկրպագուներով: Մեռնելով՝ նա իր հընգամյա որդի Շահնշահ-Սարգսի հետ միասին, իր եղբայր Իվանեին հանձնեց բազմաշարժար հայ ժողովրդի բախտը: Կարեւոր էր ոչ միայն նվաճել, այլև նվաճածը պահել իսկ այդ միսին նրա եղբայրը, Իվանեն, պատվով կատարեց:

Մեռավ «լի ամենայն բարիքներով», միջո և ամենուրեք «հաղթող, քաջ և հույժ մաքառող» դուռցազնը: Վրաց պատմագրի ասելով՝ նրա մահը մեծ ցավ պատճառեց ոչ միայն հայ ժողովրդին. «ողբացին թագուհին և Վրաստանի ամեն մի մարդ, քանի որ այն ժամանակները իշխանների մեջ նրանից ավելի քաջարի ոչ ոք չէր

երևացել, ինչպես նաև տոհմական ծագումով:

Մեծ գորավարը թաղվեց իր մեծանուն հոր, Մեծն Սարգիս Երկայնաբազուկ ամիրսպասալարի կողքին, Սանահնի վանքում:

Դեռ այսօր, Լենինականից դեպի Արթիկ տանող ճանապարհի վրա, Հառիճ (Ղըփշախ) գյուղում կանգուն է մնում ամիրսպասալար Ջաքարիայի կառուցած հոյակապ տաճարը: Տաճարի արևելյան պատին նա մշտնջենական հիշատակ է թողել պատմության համար: Այդտեղ, բարեկեֆի վրա ամբողջ հասակով պատկերված են Ջաքարիա և Իվանե եղբայրները, մարդիկ, որոնք իրենց հայրենիքի, իրենց ժողովրդի համար ոչինչ չեն խնայել, որոնց շնորհիվ հայ ժողովուրդն ապրել է իր գոյության պայծառ շրջաններից մեկը:

Ջաքարիա Երկայնաբազուկի գործունեությունը մի փայլուն ապացույց է հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության և ընդհանուր պայքարի ընդդեմ օտար նվաճողների: Եղբայրական այդ եր-

կու ժողովուրդների մարտական գինակցու-
թյան փայլուն տրադիցիաներն իրենց լա-
վագույն արտահայտությունը դտան մեր
օրերում: Ռուս մեծ ժողովրդի ղեկավարու-
թյամբ, Սովետական լուրը մյուս եղբայ-
րական ժողովուրդների հետ միասին, նրանք
ձեռք-ձեռքի տված հաղթական պատերազմ
են վարում ատեղի թշնամու՝ գերմանական
ֆաշիզմի դեմ: *ՀԵՅՏԵ ԸՆԿԵ ԱճԱՆԻՔ: ՈՂՈՒ*



ՀԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043540

ЦЕНА

~~1~~
16823